



ՔԱՆՈՒՄՆԵՐ ԱՊՐՈՒՓԻՆԸ

Պաշտարանի համար	10 Ֆր.
Տարեկան	5 »
Ստասանի համար	12 »
Վեցամսեայ	6 »
Սանիտարի համար	2.50 ռ.
Տարեկան	1.25 »
Վեցամսեայ	

Պատկերներ և տպագրություններ համար 40 սանիտարի համար 20 սանիտարի համար 20 Օլո գեղջ կրկնայ:

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Редакция на вестникъ

«Шаржумъ»

Варна.

Redaction du journal

«Charjourn»

Varna (Bulgarie)

Իրոքիւնք եւ չեն տրուիր

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

(Գին 10 ՍԱՆԹԻՄ)

ՍԵՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը դիմենք մեր այն գործակատարներուն որոնք տարևով և ամիսներով իրենց քով պահած են թերթիս գանձուած գրամները, և շարունակ մեզմէ ժամանակ կը խնդրեն ու կը խաբեն: Եթէ այս անգամ ալ լուռ մնան մենք ստիպուած պիտի ըլլանք ուրիշ միջոցներու գիտնել:

Նոյնպէս և կը խնդրենք մեր այն բաժանորդներէն որք մինչև ցարդ չեն վճարած իրենց բաժնեգրները հաճին անյապազ մեզ զրկել: որովհետեւ Բ. տարին լրանալուն 2 1/2 տմիս մնաց:

ԿՐԿԻՆ ՍԿՍՎՈՒՄ Է

Մի տեսակ ճնշող, խուլ լուծիւնը տիրում էր մեր ապստամբական կեանքի մէջ. յուսահատները, թնկերը վհատուած դուրսէն մէջ էին, կարծելով որ հայ յեղափոխականները խեղճիկ են անտանելի հանգամանքներից և պայմաններից. վատ հայերը—տանկական գործիքները ձեռքերը չբռնէին տանկի հետ միասին՝ համոզուած լինելով թէ տանկի բռնապետութիւնը կարողացաւ արմատախիլ անել «էտէպսիզ» ու սրիկայո հայ «կոմիտաճիներին» և իրանք պէտք է կարունան հանգիստ ու խաղաղ վայելել հաւատարիմ սարուկին վիճակված բարիքները:

Եւ ահա անցեալ օրվայ Եւրոպական թերթերը եկան նորից ամեն բան տակն ու վրա անելու, վճատվածներին ոգևորելու, վատ ստրուկներին յուսահատեցնելու և աւելի կատաղեցնելու:

Բուն Հայաստանի մէջ նորից երեւացին հայկական զինված խմբեր. Ռուսաց սահմանադրից հարիւր հոգուց աւել զինված մի խումբ մտաւ Տանկական հողը գուցէ իր այնտեղ կուսով ընկերներին օգնութեան հասնելու: «Բայտ» հայը նորից շրջադրեց իր գաշտը և կրակեց իր հրա-

ցանը—իր սանջված ժողովրդի իր աւերակ հայրենիքի սրկուած կեանքի համար և կրկին շեշտեց աշխարհի առաջ—մենք սեղակուն հայրենիք և ազատ կեանք ենք ուզում:

Արախալի ոգևորող երեւոյթ, իրաւութիւն, և մի նոր փաստ որ հայ ժողովուրդը անկուսէ է իր նպատակին հասանելու համար ընտրած շաղի վրայ և պիտի մնայ, մինչև որ իր նպատակին չը հասնի:

Մեր կեանքի մէջ սերտախալի, ոգևորող փաստեր շատ քիչ են. բայց այդ տեսակ փաստեր պատահած միջոցին—անպատճառ երեսն է զալիս և մի խոշոր վատութիւն, մի անկարգադրելի ցածութիւն:

Յիշած խմբերից մէկի պիտին կրկին հայերը մտածում են թուրք կառավարութեան. այն պիտին որ ամբողջ եօթ տարի սարսափ էր տարածել թուրքի և քուրտի վրայ:

Հայոց Պատրիարքը պալատի հրամանին անտալով հեռագրով շրջաբերական է ուղարկում հայ հոգեւորականներին, սերմն և հայ ժողովուրդին որ ապստամբներին չօգնեն, պարզ է որ վատ սել կարող են: Այս տեղեկութիւններն էլ Եւրոպական թերթերն են տալիս. այս մեզ արատաւորող լուրերն էլ Եւրոպային է հաղորդում: Երանի թէ այդ վատութիւնները սուս լինէին, բայց մենք հատուտ մենք որ ճիշդ են, որովհետեւ վատ հայը, վատ ստրուկը ամեն անպատակի և աներեւակայելի վատութեան ընդունակ է. այդ տեսակ օրինակներ մենք շատ ենք տեսել թէ Տանկատանի մէջ և թէ ազատ Եւրոպայում:

Այսպէս թէ այնպէս, հայ յեղափոխական շարժումները դադարած չեն—հայ յեղափոխութիւնը մնում է. հայ ապստամբութիւնը կրկին սկսվում է. ու նա կը շարունակվի—գուցէ ընդհատվելով—բայց յարատեւ, մինչև

վերջին վայրկեան—մինչև ազատութիւն:

Կը կրկնվեն և վատութիւնները, կը կրկնվեն և ցածութիւնները, բայց հոգ չէ—հայ ապստամբութեան կրակն ուրոցը, սուրն ու շիկացած գընդակը, ստրուկի շղթան կամաց կամաց կտրելով, ջախջախելով հանգերձ, կը կտրտեն, կը սչընչայնեն և այդ վատութիւնները, նրանց հեղինակներին:

Եւ մենք մի գեղեցիկ օր, աւելի մաքուր, աւելի ազնիւ, և աւելի արժանաւոր կը հասնենք մեր ցանկալի ազատութեան:

ՎԱՐՊՈ

ՀԱՅ ԱՊՍՏԱՄԲԵՐՈՒ

ՅԱՐԱԿՈՒՄ ՄԸ ԹՈՒՐԻԿԻԱ

(Մասնաւոր հեռագրի միջոցով Ֆուրքըր Զայրուկին. Էրզրումէն սօքթօր Պէլկէն):

ԷՐԶՐՈՒՄ, 16 նոյմ.

Հայ ապստամբներու նոր յարձակում մը տեղի ունեցաւ: Նոյ. 7ին երեցան ասոնք Արաշկերտի մտերը և կէս օրին անհամար հրացան արձակեցին նոստանուկ հայ զիւղին քով: Ես քրդական յարձակում մը կարծելով մտադրեցի զինուորական հետեւորդներովս հոն փութալ. բայց լուստեղեակ Սատիկանցի հայ զիւղացիներ սխալ տեղեկութիւն տուին թէ քրդական հարսանիք մը տեղի կունենար և անոր համար ուրախութեան հարուածներ կարձակէին: Մինչդեռ ինչորք խկապէս երեսուն հոգիէ բաղկացած ապստամբութիւն մը տեղույս քիւրտ զիւղերուն վրայ յարձակուին էր: Խուճը սկիզբէն հարիւրէն աւելի մարդիկ կը բաղկանար, և կուգէր երկու մասի բաժնուելով Ռուսական սահմանը անցնել, զէպի Մուշ քաղի և Տալուրիկի լեռնավայրի բարձունքներուն վրայ որ Մուշի հարաւային կողմը կէյնայ իմրապետ Սերորին հետ հայկական թագաւորութիւն մը հռչակել: Ապստամբները Շանկիր զիւղացիները զինեցին, սպանեցին Տէրվիշ աղան և անոր եղբայրը. ինչպէս նաեւ բաղմաթիւ ուրիշ զիւղացի յիւրդեր. մինչև Արաշկերտի գայմազամը երեցաւ քսան հետեւակ զօրքով, քսան ոստիկանով և ութ աղնուականներով Թօփրաքաղէն: Աւել ժամ հրացանամարտ մը տեղի ունեցաւ, որու միջոցին թուր-

քերէն էրեք զինուոր և Պաղէլուլ փաշայի որդին Խալկ պէյ սպանուեցաւ և մէկ զինուոր ուստիկանութեան չափուչ մը վիբաւորեցաւ: Միւս կողմէն 15 ապստամբներ և 30 զինուած զիւղացիներ սպանուեցան ու ապստամբը գերի բռնուեցաւ: Քիչ յետոյ իրիկուան երեցան հեծելազօրք և ուրիշ զօրքեր, որու վրայ ապստամբները հարաւային լեռները ապստանեցան: Խուճին միւս մասը սահմանադրիսին մասնուսական զիւղի մը մէջ յաջորդ օրուան կը սպասէր: Քիւրտերը ուզեցին իրենց պէկին վրէժը լուծելու համար Մինիթէփէ հայ զիւղին վրայ յարձակիլ ու բնակիչները կոտորել: Բայց հեծելազօրքը յարմար ժամանակին քրդերը վանեց ու այս աւելի ընդհարման մը միջոցին քիւրտ մը սպանուեցաւ:

Էրզրումի մէջ սոսկալի տարածանութիւններ կը շրջին ծանկարի, Սէախանի և ուրիշ հայ զիւղերու կոտորածի մասին, բայց ասոնք բուրն ալ չինծու են: Կարգը ամէն տեղ կը պահպանուի: Կառավարութիւնը և զինուորականութիւնը կատարեալ գովեստի շարժանք են: Իրենց պարտականութիւնը հանդարտ և ազգու կերպով կատարելու համար: Մանաւանդ կուսակալ Ռէուֆ փաշա, երեւելի, մարդասէր և ամէն մասամբ սիրելի պաշտօնակալ մը:

Ապստամբները Ռուսական զինուորական հրացաններ ունէին, խմբապետ Սէքօ, որ եօթ տարեէ ի վեր Պիթիսի կուսակալութիւնը կը վրդովէր սակայն չէր ձերբակալուէր, որովհետեւ անմատչելի լեռներու ու անթափանցելի անտառներու մէջ կը կենար սպանուեցաւ: Աս յարձակման օրը հայրէն մասնուեցաւ և իր տղուն, եղբորը և երեք ընկերներուն հետ Տալուրիկի գաւառին մէջ կէլի կանտան զիւղին քով դարձան ըրերուցաւ: Վեց ապստամբներն ալ սպանուեցան և մէկ ոստիկան վերորուեցաւ:

Յիւրիկա Թարգուլ ԿՍՐԻՃ

ՀԱՅՐԵՆԻՔ

Չեմ գտներ բառ մը, որ այնչափ քաղցր թուի ամէնուն, որչափ Հայրենիք բառը: Երբ աչքիս բացի, և սկսայ ընկերներ ու բարեկամներ գտնել շատերու հանդիպեցայ որոնք իմ ուղածներուս մեծագոյն մասը չէին սիրեր, բայց չը գտայ մինչև այսօր մէկը, որ չը սիրէր սա Հայրենիք բառը:

Թագուն սէր մը ունի իր մէջ : Զինուորը պատրաստ է իր անձը նուիրել անոր սիրուն , երբ հայրենի երկրին վերահաս վտանգը կը տեսնէ :

Բանաստեղծը ճիշդ կը բաշխէ իր հանճարը , ներբողներ կը հիւսէ անոր փառաբանանքները , իր սուր մտքով անոր ապագային գուշակութիւններ կը նշէ , խրատ-խոյս կը կարգայ արի հերոսներուն , ի հող հանգչող իրեններուն քաջագործութիւնները անմահացնելով , և հայրենասիրական ճարձատուն բոցը կը վառէ մատաղ սրտերուն մէջ : Պանդուխտը իր օտարութեան ժամանակ , իր հանգիստը հոն կորսնէ , և այրած սրտէն միշտ Հայրենիք բառը կը հառաչէ , ու ամէն մէկ հառաչանքին հետ կործեն սըրտէն արիւն կը հոսի և իր կեանքէն օր մըն ալ կը պակսի :

Նա բեւեռացած արեգակ մըն է կարծես , որ իր շուրջը թաւալող որդիքը որչափ ալ որ իրմէ հեռանան , միշտ մագնիսական զօրութեամբ մը անոնց սրտերը իրեն կը քաշէ , թոյլ չիտար որ իր հարազատ որդիները , երբ իր ծոցէն բաժնուին , օտարամտութեամբ զինքը մտնան :

Այո շատ սիրուն է այս բառը : Երբ Պօլիս առաուն կանուխ կելլէի , փողոցներուն մէջ շրջող հայ լրագրագրողներու այսօրուան «Հայրենիք» քարձրացուցած ձայները օտար երկրի քաղցրախոս սոխակին երգերէն աւելի անուշ կը հնչէին ականջիս , և ինչպէս ինձ վստահ եմ որ այնպէս էր նաեւ ամէն հայուն հա-

մար : Սակայն Պ. Արփիարեան ասկէ գերազանց համարեց իր գրպանին մէջ շղկացող տաճկական դեղը : Կլորիկ ոսկիներու ձայնը , ազամորգին խաբուեցու իր նախահօր նման , ձգեց իր գործը , ափսոս փակեց այն դուռը , ուրկէ այդ ժողովուրդի սիրած բառը Հայրենիքը դուրս կը բխէր : Այսպէս ամէն ինչ Երեսի վրայ թողնով , գնաց խաւարը իր մրտա երեսը Լոնտոնի , մարտիապատ քաղաքին մէջ պահելու : Ուշմրտա Արփիարը մրտեց Հայրենիքը :

Այսօր աւելի պայծառ տեղ մը , քան Կ. Պօլիսի ցիխոտ ու շնալից փողոցները , ուր թուրքը ուղեց այդ պաշտելի անունը մեր մէջէն արմատախիլ ընել , Ամբրիկայի պայծառ արեգակին տակ և ազատ հողին վրայ «Հայրենիք»-ը վերստին լոյս կը տեսնէ : Հոն , ինչպէս ամէն լրագրագրողները , ազատ կը շրջին ամէն տեղ , ոչ շունը անոնց ցոփերը կը փակթուի և ոչ ալ թիւրքը ձեռքերնին կը բռնէ :

Ուրախ ենք որ Ամբրիկայի փոքրիկ գաղութը չի կրցաւ մտքէ հանել Հայրենիքը , և այն անուամբ դրոշմեց իր լրագիրը : Ուրախութիւնն անդրաւական էր , արդարեւ , երբ Ամբրիկայէն «Հայրենիք» և «Չայն Հայրենեաց» թերթերը ընդունեցի , առաջինը իր վրայի պատկերով հայրենիքի վերքերը ցոյց կուտայ : անոր մէջ կարելի է կարողալ մեր փառաւոր անցեալը , ու տեսնել ներկային տառապանքը :

Իսկ երկրորդը իր փողով հայրենի երկրին մէջ բարձրացած ճիշերուն արձագանգը կը բերէր մեր սկանչներուն կարծես :

Իայց միայն անունով և սիրուն պատկերով բան չըլլար , կը փափագինք որ արտոնք իրենց անուններ չը մրտեն

ՏՂՄՈՒՏ

Վրէժնասօրֆ 2 Նոյեմ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱԻՐԻՉ , 15 Հոկտ.

Սոցոստոս 18 թուականով «Շարժում»-ի մէջ գրած յօդուածի բժիշկի վերաբերած մասը «անփաստ հայհոյութիւն» են համարում այստեղ : Եթէ արատահամանեան ընթացիկները նոյն բանը ասէին , թիւրքու մենք ներքու պատճառներ ունենայինք , սակայն երբ փաստը կենդանի ու անհերքելի փաստը իրանց աչքի առաջ ունեցող մի քանի թաւրիկցի տգէտ հակառակորդներ են ասում այդ խօսքերը , մենք ստիպուած մէջ ենք բերում մեր փաստերը և ապացոյցները , որոնք միայն անհատական վերաբերելուն համար , չէինք յիշած , թէկուզ այդ ինչ իրենք կապ ունենար ընկերութեան հետ : Խնդիրը «բաղդախնդիր» և «բողոքական» խօսքերի վրայ է :

Մենք երկրորդ բանը գրելով , բնաւ միտք չենք ունեցած կրօնական կամ դուստնական խտրութիւն քարոզելու : մենք լրացարձակապէս խղճի ազատութիւնը յարգում ենք , թէ մենք այդ խօսքը յիշեցինք , պատճառը

այն էր , որ այդ անձը համարձակութիւն չէ ունեցած ինքնիրան բողոքական ցոյց տալու , այլ մի կերպով ժողովրդին խաբում էր ինքնիրան Լուսաւորչական ցոյց տալով : Ինչո՞ւ համար այս անհամարձակութիւնը : Ո՞հ , պարզապէս մեր առաջին բառը հաստատելու համար : Սրա համար էլ ապացոյցներ է՞ք ուզում : Իայց այդ մեջ շատ հեռու կը տանի

Գալով առաջին բառին , դարձանում ենք թէ բաց աչքեր լայնը չեն տեսնում : Լաւ , հակառակախօս պարոններ , ինչ անուն կաար այն բժիշկին որը սիրի բժիշկները լրագրագրողութիւն շատ գործ ունենալով հանդերձ , ստորանում է բախտութիւն և մանրափաճառութիւն ևս անել . ծախել թէյ , սապոն , կօնիակ , ձիթալիզ , ծխախոտ , տուփով եւրոպական անուշեղէններ , դուլպայ , թիւշկիտակ , Փանէլ , կաւա , շապիկ ու վարտիք , և այլն : Կարող է՞ք ուրանալ այս պարագան :

Ուրեմն , բաղդախնդրութիւն չէ՞ այս :

Ուրիշ ապացոյցներ ու փաստեր մի՞ խնդրէք , խնայելով ձեր պաշտպանած Էկլուսփին . խնոր տեսնէք , նոյն ձեռք պաշտած Արաճեան եղիտկոյնը կարող է վկաս լինել , անշուշտ կը յիշէ , որ յիշեալ բժիշկը հանգուցեալ Քէշիշեանի խաչը բռնելով , արած ծախսերը ամբողջովին և անամթարար ստացած է սրբազանից , թէեւ հասարակութեան մէջ այդ առթիւ իրա գրպանից

ԸՆԴԴԻՄԱԽՕՍԱԿԱՆ

ԽԱԽԱՐԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒՆ

« Համբերութիւնը կեանք է » ըստած է , և զայն մինչեւ իսկ գեղեցիկ առաքինութիւններու կարգը դասած են : Իայց այս ալ գոնէ որոշ սահման մը չունի : Համբերելու է՞ շարք մը գերեզմանական ձայներու , որոնք , իբր թէ անաչառ քննադատի հովեր առած՝ թէեւ միշտ այդ քննադատութեանց մէջ պահուած է ջար Եսայիան , խաւարմիտ կուսակցամտութիւնը , անգաղտը , ալ ու ձախ կը կոկոսան ու կը կոկոսան . ոտքի տակ կոտորեն ամենասուրբ ու գեղեցիկ գաղափարներ . անմահ յեղափոխականներ կը դատափետուին անարժաններու , թափթիւր քննութեւ կողմէ

Եւ այն ամէնը եսականութեան և շահու համար . . . : Երբ կը լսենք կամ կը կարդանք թերթերու մէջ միջնադարեան ծրարած գաղափարներու արտադրութիւններ , սրբապղծութիւններ , ճշմարտութեան գէժ հայհոյութիւններ , կը սեմ , ասանկ պարագաներու մէջ ալ համբերելու է , Եւրո՞ւ է : — Չէ , ըստ իս արդարա-

ցի չէ այդ . եթէ երբէք հաւատացած իսկ ըլլամ թէ իմ այս գաղափարիս կուսակից չի կրնալ գտնել զատ պիտի դատապարտուիմ . գարձեալ իմ միակ ու անփոփոխելի կարծիքս է սա՛-պէտք է լուրջ մամուլը կուր մղէ , աշխատի խեղդել այդ բուերու ձայնը զեռ արձագանք չի գտած , միամիտներու մտքերը չի պղտորած , և ասպարէզը պէտք է հա՛անխել , կամ գոնէ՛ ընթերցողները միակողմանի մտածում , թիւրթմացութիւնէ զերծ պահելու համար , արտայայտուած գաղափարին յարակից ճշմարտութիւնները ցոյց տալ : Միշտ լիասարբէր է կարգ մը ցեց-թղթակիցներու գոյութիւնը , քանի որ անոնք իրենց կողմը չեն ճանչնար , և հետեւաբար միամիտ ընթերցողներու պատուհաններ կը դառնան

Մինչեւ հիմա «Շարժում»-ի սրնակներուն մէջ ու եւ նիւթի մը վրայ գրելու պատենութիւնը չունեցայ գրեթէ . այլ միշտ զայն իր օրնսայթաք ու ճշմարիտ շաղկին մէջ տեսնելով ու կարդալով հիացողներն եղած եմ ու պիտի ըլլամ , ցորչափ անիկա իր գերը հաւատարմօրէն կատարէ : Ասոր համար ալ չէի ուզեր անորսու լէջերը մէկ երկու թերթերու անշահ թղթակիցներու համար շտայլել , եթէ սակայն եկեղեցական օրէնքները յարգելու գիտակիտ տակ եղական նահատակի մը յիշատակին եղած դուզնաքեայ պատիւը և ա-

նոր պաշտելի յիշատակը նսեմացնելու չափ վատ քայլեր աւտողներ չըլլային , եթէ չի շարունակուէր կրօնական զանազան խնդիրներով ունեցած ու փտած գրութիւններ հրատարակուել , զորս մեր ազգը զարեթէ ի վեր այնքան ծծած է որ մինչեւ իր ծուծին հասած է , և սրուն ազգեցութենէն ո՛չ ազատած է և ո՛չ իսկ զեռ անոր թողուցած զիտաները դարմանած : Վերջապէս , եթէ չի շարունակուէր այս կամ այն կուսակցութիւնները իրարու դէմ գրգռելու , ասելու թեան գոռած սերմեր ցանելու փորձերը : Ան այս կարգի մէկ երկու նամակի համատու մը պատասխանելու համար կը յուսամ թէ «Շարժում» կը հաճի սրնակ մը նուիրել ինձ , որոնց անուակէն յաճախ լոյս աչխարհ կուգան «Իրաւունք»-ի և ուրիշ ազգոգրու թղթի կտորին միջոցաւ :

«Իրաւունք»-ի վերջին 77 և 78 թիւերուն մէջ Յիլիպէն գրուած երկու թղթակցութիւններ հրատարակուած էր Դիտոյ և Գ. ստորագրութեամբ . իսկ «քուրջի կտորին» մէջ ալ Մլախ ստորագրութեամբ գրութիւն մը՝ իր կարողութիւն խմբագրին ծանօթութեանը հետ մէկ տեղ : Զինայած որ այդ թղթակցութիւնները սարբեր ժամանակի մէջ , զանազան անհատներու ուղղին ծագում կանոնէ , սակայն երեքն ալ նախանձի արտաքին բռնուած ցաւազարական ճի-

գեր կընեն վերջերս կարնայ մէջ նահատակուած Արամ Արամեանին պաշտելի յիշատակը նսեմացնելու , և այս առթիւ կը ճգնին անոնցմէ երկուքը խնայատակուն մէջ դանուած պտիկ մը խեղք կիրարկել իրենց կուտքը — Չաքրեանը — մէջանգ նստիլու և երկու խօսք ալ վարժարանի մասին ըսելու համար :

Դիտոյի նամակին առաջին պարբերութիւնը՝ որոնք անաչառ օրէն կը գծէին հայու մը պարտականութիւնը զկախ հայրենիքի համար նահատակուող զինուորները — բոցայայտ կերեւայ թէ անկողմ սրտի մը ծնունդը չէր . այդ բանաձևը յօրինուած է կարգը Չաքրեանին քերելու և զայն մէջանգ նստիլու համար : Այսպէս թէ այնպէս , այդքան ալ ճգնիմ արտադրանութիւն : ո՞վ առաջարկեց Չաքրեանի համար հոգեհանգիստ կատարել տալ , ու Արամեանի կուսակիցները ներկայ չի գտնուեցան : Ո՛չ միայն Չաքրեանի որուն վերջին տարիներու բռնած ընթացքը , ազգալիստ ուղղութիւնը , բաւական ջանքերից իր անցեալը , այլ ամէն հայ անհատի համար , որ գործ մը կատարած է յանուն ազգսուրբ գործին , պարտաւոր ենք բախտագրութիւնն իս մատուցանել : Մենք «Շարժում»-ի մէջ յատկապէս եղած ազգոտարութեանը գիտնեք որ տեղոյս Դանակցականները պիտի կատարել տային այդ հոգեհանգիստը

քան թուաման ծախսած լինելը պարծենում է, ի հարկէ առանց կարծրելու Այսպիսի կեղծ հասարակութեան այսպիսի բաղդախնդիրներ արժեն

Մեր խօսքը Սարաճեանի վրայ գալով, ակամայ յիշեցինք «Տիրութեան» մէջ գրուածը այս «Շարժում» յիշած էր մեր ասածները շրջալու համար: Գծարարաբար մեր ձեռքը «Տիրութեան» չէ հասնում, միայն «Շարժում»-ի ակնարկութիւնները հասկանում ենք, որ «Տիրութեան» յօդուածագիրը ջանացել է շրջալ մեր գրածները, Սարաճեան եպոստոսարած մատուցած մասին:

Սարաճեանի գիմաղձերը միայն գիտելով կարելի է գուշակել նրա ինչ բնաւորութեան տէր լինելը, առանց Մանուէլի գացցա կամ Լօմբրոզո լինելու:

Այո՛, դարձեալ ի՞նչ կրկնենք թէ այժմ Սիրիւր քաղաքում Պարսի խիւղիկան անունը ռուս կոնսուլը չէր իմանում, մեր բնակները ինչ մէկը (Հ. Մ.—Ս.) Սարաճեանին յայտնեց նրա խիւղիկան անունը, որպէսզի գիտնալով նրա իշխանական ծագումը և հետեւաբար կարեւորութիւնը, ետեւեւաբար աշխատի նրան աղատելու համար: Արդ, նրա խիւղիկան անունը ոչ ոք գիտէր մինչև այդ ժամանակ, մենք նոյնիսկ նրա մտերիմ ընկերը լինելով հանդերձ:

Սարաճեան ինքն էլ չէ ուրացած, և առարկած է թէ ինքը մի ուրիշին է յայտնած նրա խիւղիկան անունը, որպէսզի սրտու-

վին աշխատի նրա ազատութիւնը ձեռք բերելու համար:

Մենք Սարաճեանին շատ միամիտ կը կարծէինք (թէեւ միշտ համոզված ենք թէ ընդհակառակն է), եթէ այդ մի ուրիշին ինչ տեսակ մաշկ լինելը չը գիտնար: Սակայն, արի տես որ Սարաճեան շատ լաւ իմանում էր նրա ինչ տեսակ անվստահելի մարդ լինելը, և նոյնիսկ Սարաճեանին էր, որ նոյն այդ մի ուրիշին առաջնորդ արանից վաճառեց, իբր կոնսուլի լրտես և այլն: Բայց յիշող պարագաների բերմամբ նրա հետ հաշտակեց և ընկաւ նրա ծուղակը, որի շնորհիւ ի այտառակութեամբ թաւրիղից վաճառեց:

«Տիրութեան» յօդուածագիրը արդեօք գիտէ այս պարագաները, կամ թէ արդեօք գիտնալով չէ՞ մեղանշում:

ԳՆԴԱԿ
ՍՕՅԻՆ, 5 նոյն.

Կրթական նախարարութեան որոշումովը երկու հայ ուսուցիչները որոնք պետական դպրոցներու մէջ կը պաշտօնավարէին գաղթականութեան հասնօքէն ի վեր, մին Սօֆիաի քրտիկ կլիմանալիս մէջ, Պ. Շահնուար, Պօլսոյ հայ գրականութեան յայտնի գէմքերէն, իսկ միւր Պ. Սիմոնեան Ռուսչօքի կլիմանալիս մէջ, իրենց պաշտօններէն արձակուեցան: Այս տարածում կարգադրութիւնը ձեռնարկուած շունչ ու անխորժ եղանակներու մէջ ո՞վ գիտէ ինչ անպատեհ պայմաններու պիտի ենթարկէ զիրենք: Յաւ կը զգանք որ այս

«յանկարծակի տնօրէնութիւններուն» ստիժ տուած են իրենց ծայրայեղ պահանջներովը ու անխաճմ քայլերովը երկու հայեր, թէեւ շատ անմեղ շարժած զգալով զիրենք: Մէկն է «պատուելի» տիպոսով խիղճ վարժապետ մը «Իրաւունք»-ին թղթակիցը, սա իբր «աշատական» միջանի բարեկամներու միջնորդու թեմամբ յարատեւ խնդրամտոյց կըլլայ ֆրանսերէնի քաթէզոան ձեռք բերելու: Միւսն ալ ձիւղիկայէն Մ. Փափազեան մարդուկը՝ որ երբեմն գաւառական բժիշկի պաշտօն է վարել ի Սօրիսովկրատե արտաքսուած է իր պաշտօնէն: Արովհետեւ իբր բժիշկ և իբր մարդ հայաստանցիի մը հոգեվար սըրտամորմք աղաղակին օգնութիւնը կը մերժէ, վասն որոյ այնտեղի հայվաճառականներու խիստ բողոքներու հիման վրայ կարտօքսուի:

Ասոնք երկուքն ալ հոս են: Երեսներն պինդ, ու իրենց խնդրանքներովը ալ պուլկարէն աւելի պահանջկոտ, մուրացող բոջաներու պէս, պաշտօնատները սովորական գլխի ցուէն զատ զլուծուցած էին: Ինչո՞ւ ուրիշները այդ մարդասէր հիւրանկարութիւնը լիովին վայելին և իրենք ոչ! ասոնք կանգիտանան որ հարիւրաւոր պուլկար կարող բժիշկներ ուսուցիչներ զեւ կակնկալին և չեն տեսներ որ նոյնիսկ պուլկարահպատակ հայը իր բոլոր իրաւունքներովը հանդերձ ինչ գծուարութիւններով կը մարառի պաշտօնի անցնելու: Երբք չենք նախանձիր, աւելի կը բաղձայինք որ պաշտօնատներ ունենայինք,

բայց ամէն մարդ ճանչնալու է իր աստիճանը և իր կոշիկէն վեր չելլալու է: Այդ դիմումներուն կարի անհեթեթութիւնը ու անլրջութիւնը աւելի եղաւ որ երկու ուսուցիչները իրենց ապրուստէն զրկուեցան: Եթէ այս ուսուցիչներուն նախապահուած ըլլայ կամ ալ նախատնօրինուած ըլլայ այս տեսակ որոշում մը, շատ առաջ—գպրոցական տարեշրջանը չսկսած կըլլար ինչպէս որ ուրիշներուն ըրին:

Ինչ է բարձր տեղեր թառելը այս «պատուելի» մեր աղքատիկ դպրոցներուն մէջ գոհացուցիչ պաշտօն մը կը գտնուէր: Ինչ բարձր ուսում, որ համալսարանի վկայականով կուղէ բրօֆեսորական քաթէզոան առնել մի՞թէ այս ծիծաղելի չէ!:

Իսկ գալով Մ. Փափազեանին, պաշտօնը իրեն այնքան կարեւոր չէ, որովհետեւ այդ իրեն բնաւ պէտք չը պիտի ըլլայ, իր ուսուցիչներուն ներգործութիւնը իրենց գինը չեն կորսնցուցած դեռ: Իր արհեստի հոշակը իրեն կը բաւէ և ձիւղիկայէ աւելի յարմար է որովհետեւ «ախորժակի, փորի-ցաւի և ջերմի» սպանիչ հիւանդութիւնները իրեն օգնութեանը կը կարօտին: Իր ներկայութիւնը ի ձիւղիկայէ ուրիշ տեսակէտով ալ անհրաժեշտ է, որովհետեւ միայն նա է որ պիտի պահպանէ ու պիտի հսկէ Արգոսի նման, որ մեր եկեղեցիին Ս. ծէսերը ու սրբութիւնները չանարգօրին ու չը պղծուին բողոքական կամ կաթոլիկ հայէ մը:

Կառավարութիւնը Եւրոպական

Եւ ո՞չ թէ երեք կուսակցութիւնն ալ հաւաքաբար, եւ ինչպէս որ անունուեցաւ, Դաշնակցութեան մասնաւոր անհասանելի ամէն ճիգ չի խնայեցին, որքան կարելի է, հոգեհանգիստ փառաւոր ընելու: Չաքրեանի համակիրներուն ալ փոխանակ հրամայական ձեւի տակ պատգամ տալու: Դիտողի միջոցաւ հոգաբարձութեան հոգեհանգիստ խնդրելու, աւելի լաւ է խուճը մը կազմել եւ հարկ եղած տնօրինութիւնները ընել, ինչպէս կըսէր Դիտող: Ատկից զատ Չաքրեանի թաղուած մարմինը պիտի վայելէ ուրիշ յարգանք մըն ալ: —գերմ պիտի ըլլայ օժուածի կամ չօժուածի կրօնական անձուկ հաշիւներէ եւ եկեղեցական արարողութեանց կրճատումն ալ նկատողութեան անուշիկ, որ զինք հերոսացնողները ընելու քաջութիւնը եւ սղջմտութիւնը չունեցան: Ես ալ իմ կողմէ «Շարժում»-ի միջոցաւ գիրութիւն մը կընծայեմ անոր լուսանկարը գտնելու մասին, որ կը գտնուի լուսանկարիչ Գարակէօզեանի քով, վերջին անգամ ձիւղիկայէ գտուեց քաջուած, եւ որ պատրաստ է կարծիք քանի մը տասնեակ հերոսներ արտագրել:

Գալով Մարտիկոյ խանութպան թերթին թղթակից Գ. ի գրածներուն Արամեանի մասին, շիտակը աւելորդ է պատասխանել, քանի որ վերը հարկ եղածը ըսի, եւ արդէն չըսէի իսկ, պատասխանելու դժկա-

մակութիւն ցոյց պիտի տայի թրգթակցի մը որ պարզապէս կիրքով, աստիճան իսկիսի եւ այնպէս կը վերջացնէ. չի գրեր երկու խօսք առանց սուտի, առանց անկողմակալութեան, որոնց ակտիւները ժամանակ մը գծարդարար Արմենիա քուրճի կտորին մէջ կարգադրեց եւ ժամանակէ մը ի վեր Իրաւունքի մէջ կը կարգանք, այդքան ալ կուսակցամտութիւն:

Իսկ Աշալը այնքան ծիծաղելի դեր մը ստանձնած է օժուել չօտուիով, որ պարզապէս մեր ծիծաղը կը շարժէ, ինչ կատարի կրօնամտութիւն: Ո՞վ Աշալ տեսնեց թէ Արամեանը, Բարկէններու, Սուրեններու եւ անոնց նմաններուն, որ կուսակցութեան ալ որ պատկանին, որոնք մինչև վերջը հայրենիքի աղապտութեան համար աշխատած ու «Հայրենիք», յեղափոխութիւն» բառը բերանին աւանդած են հոգիներն, փոխով կամ համեմատող կա՞յ սուրբ Մարգարէն ու Գեորգիին հետ Ինչու արգիլուի ասանկ անմտներու պատկերները բեմին առջեւ զնելու վայրկեանի մը արարողութեան համար: Ու ինչպար խմբագիրն ալ հըպարա կրօնականի մը պէս վճիռը արձակեր է . . . աման կամոց Աշալ ինչ ալ գեղեցիկ ծածկանուն, եթէ գիտնալիք որ ձեռ կրօնական ծիծաղ գաղափարները չընդունողներ

ու ձեռ սլաքը ձեռ վերադարձնողներ պիտի ըլլային, թերեւ աւելի յարմարագոյն անուն մը որոնէ՞ք, ձեռ ընտրած նիւթին տակ աւելի լաւ ու ճշգրիտ չէ՞ր ըլլար երբ կրօնամտող ստորագրէ՞ք: սլաքը ստեղծուած է կեղծողը, ստողը եւ զգացումով կոյրերը ջնջելու եւ ասպարէզը մաքրելու համար, մինչդեռ զուք նախապաշարում կը սերմանէք . . . —Իսե՛ղճ հնձողներ

Վարժարանի մասին երկար չը պիտի գրեմ: Միայն սաչափ պիտի ըսեմ որ, հակառակ Գ. ի տատանութեան, ես պիտի կրնամ ըսել թէ, ներկայիս մէջ լաւ ու գոհացուցիչ ուղղութեան մէջ է կիրթ ուսուցչական խումբի մը ձեռքին տակ, եւ եթէ կուսակցական հաշիւները—որոնք ինչպէս կերբեւի հեռացած չեն Գ. ի գաղափարէն—մէկզի գրուելով ուսուցիչները պէտք եղած օժանդակութիւնը վայելին ու շարունակեն քանի մը տարի պաշտօնավարել, այն ասան ձիւղիկայէ մատաղ սերունդը մատուցապէս ու բարոյական փերկուած պիտի ըլլայ: Ինչո՞ւ այդքան յոռետես ըլլալ, ամբողջ տասնեակ տարիներ մեկնամանկեան պաշտպանութիւնը վայելող արարողութեան ուսուցիչներուն արդիւնքն ալ աչքի առջեւ է. քանի՞ շրջանաւարտ ունիք հրապարակին վրայ, շատ չէ, գոնէ չորս սող բան ուղիղ գրող

Դիտողի նամակին վերջին մէկ գիտողութիւնն ալ կարգադր. որ կրօնագիտութեան դասերը իրենց իրենց յարմար տեղը զնել կը պահանջէր, կրօնական դասեր որոնք ըլլան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ օրինաց եւ վարդապետութեան համաձայն, Հա՛, կը հասկնանք, եւ մեզի հետ ամէն այն ընթացող, որ գիտէ քիչ մը չորս կողմը նայիլ, այդ սողերը ծնունդ առած կը թուին «սա կարեկցութեամբ» ընարուած կրօնագիտութեան Գ. . . . դասատուին կամ անոր գաղափարներով սնուած իմաստակ խնկարկուել մը: Յատուկ կարեւորութիւն տալ կուղէ իր ձեւին Պ. Դիտող, կրօնագիտութեան դասը կոչում ունի բարոյական եւ իսկալ մարդը կազմելու, կը հասկնա՞ք իսկալ մարդը, եւ մենք վստահ ենք թէ՛ ձեր ակնարկած—Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց ու վարդապետութիւններուն—քողի տակ աւանդուած դասերը խաւարեալ եւ իմաստակ մարդը պիտի կազմեն, հետեւաբար մենք ալ պիտի խնդրենք ու թախանձենք Պատ. հոգաբարձութեան եւ Պ. Տնօրէնէն որ, որքան կարելի է, լաւ հսկեն, զանոնք ճնշեալ ու սահմանափակ ձեւի տակ աւանդելու թոյլ տան: Դիտելու ատեն քիչ մը ակնոցները մաքրելու է, ամէն բան յստակ տեսնելու համար: 2010 Ձիւղիկայէ, 7 նոյն.

պանքաներու հետ փոխառութեան մի քանի կէտերու վրայ համաձայնութեան չի գտնուի, երկար ու ապարդիւն բանակցութիւններէ վերջը խղիւղ ամէն յարաբերութիւն և վճույն ներքին փոխառութեան ձեւերու տակ թէ խնայողութիւններ և թէ իր ստիպողական պէտքերը դարձանել: Քրիստոսական նախարարութիւնը օրինագիծ մը պատրաստեց 70/0 ընդհանուր զեղջ ու յետոյ 80/0 տոկոսով պիտի վերադարձնէ, տարի մը յետոյ: Որոշ չէ Սօպրանիէն ինչ վճիռ պիտի տայ, նոյնիսկ կառավարական երեսփոխաններն ընդգրկմադիր են այս զեղջուսմանը, վասն զի ամ թշուառութիւններու թիւը պիտի աւելցնէ, մանաւանդ ստորին պաշտօնեաներէն: Ֆէրտինանտ իշխանը խորապէս պատուով պետութեան այս ճգնաժամէն հայրենասիրութեան փայլուն օրինակ տուաւ իր ամսականի կէսը, կէս միլիոն ֆր. զիջանելով յօգուտ պետական գանձին: պանքաները տեսնելով որ կառավարութիւնը ամէն զոհողութիւն ու ջանքեր կրնէ միմիայն այդ հրէական անխիղճ պահանջներուն չի համակերպելու, իր առաջարկութիւնները մեղմացուցած է. և Սօֆիա եկած են իրենց ներկայացուցիչները վերջնական կերպով լուծելու այդքան խնդիր եզրով փոխառութիւնը:

Թղթակից

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Շուրջ մէկ շաբաթ առաջ բարեկամի մը խնդրանք ստանձնած էի իր զաւկին մկրտութեան առթիւ կատարուելիք խորհրդոյն կնքահայրութեան պաշտօնն: Ի դէպ ժամուն ելք հարկ էր, դիմել տեղոյն առագերէց քհնյ. տէր Մարտիրոս հօր, նա մեր մէջ տեղի ունեցած փոքրիկ բանակցութենէն յետոյ բացարձակապէս մերժեց առարկելով թէ ես եկեղեցական օրինօք պատկուած չլինելուս չէի կարող ունէ մկրտութեան առթիւ կնքահայրութիւն ընել:

Թեեւ խնդիրը երկարեցաւ երկու կողմանէ վիճաբանութիւններ եղան՝ բայց տէր հայրը իր տուած որոշմանը վրայ մնաց անդրդուելի:

Այդեօք եկեղեցական օրինաց ո՞ր յօդուածը կը տրամադրէ որ կնքահայր եզրով անձը պէտք է անպատճառ եկեղեցական օրինօք պատկուած լինի. այս մեղք համար բոլորովին անտրամաբանական է. ինչ որ ընթերցողը կարող է դատել:

Շատ կը ցաւինք որ մեր գրեթէ ազգ. բոլոր գործերը կը կառավարուին այսպիսի անձեռնհաս ու իրենց պաշտօնին պահանջներուն անգիտակ անձերու ձեռքով:

Օ. Կ.

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Կ. Պօլիս նոյեմբեր 16. Երբ հոս իմացուցաւ 120 զինուած հայերու արշաւանքը և անոնց յարձակումը հայ վանքի մը վրայ՝ հայոց Պատրիարքը պալատին հրահանգով անմիջապէս հեռագրական շրջաբերական մը զրկեց բոլոր եպիսկոպոսներուն, որ սպասամբնելուն ու է օգնութիւն ընելէ զգուշանան:

— Վանայ մէջ արձակուած 30 հայ բանտարկեալները եկեղեցի տարուելը են Սուլթանի կենացը համար ազօթելու:

— Վանայ ներքին քաղաքի անկեղծութիւնը մը զրկելու է Պատրիարքարան վիճակի գործերուն նկատմամբ, որուն մէջ խօսած է և իր հրաժարման լուրի իր զուգարաններուն վրայ, և բաւական խիստ կերպով խօսած է անոնց գէմ, որոնք օրուան կարօտութիւնը շահագործելու ելեր են այլ եւ այլ հնարներով:

— Սօֆիայի մէջ թղթակիցը կը հաղորդէ թէ բժիշկ Մէլքոն Էֆէնտի Փափազեան կապէ եկեր թերթ մը հրատարակել, որի նպատակը պիտի ըլլայ Վաշնակցութեան և «Նարժում»ի դէմ մաքաւել:

Պապօ՞ Տօքթ. Փափազեան է- ֆէնտի:

Նոյն թղթակիցը մեզ կը հաղորդէ թէ Հայրապետ Սարգսեան հայ մը պետական «բանսիօնային» հարցուսմանը աճուրդին մասնակցելով հատին 30 ֆրանք էր առաջարկած, իսկ հրէա մը 22 ֆրանքի միւսին պայմաններով յանձն կառնէ: Չը նայելով գիտներու տարբերութեանը, նախարարական ժողովը հայուն պայմանները ընդունած է, շնորհիւ այն համարման որ հայ վաճառականը հրապարակին վրայ ստացած է:

— Հայկական խոռոչութիւններու մասին Սօֆիայէն հեռագիր անցած է. հեռագրողը Վիէնայի հեռագրական պիւրօյի թղթակից Պ. Ալպէնթալն է, որը երկտեղի մարդն է և 4—5 ամիս առաջ դարձեալ հեռագիր մը քաշած էր թէ՛ հաշակաւոր Սերբ-Ալբերը իր խմբով շարժուած է:

— Ստացանք Պ. Ղ. Ջգոնեանի բանաստեղծութիւններու նոր հրատարակութիւնը, փոքրիկ գրքոյի մըն է գիրը 25 ամիսի միջոցով համարներէն միւրջն մէջ կը խօսիէր գրքոյի մասին:

ՆԱՄԱԿ ԱՍՏՈՒՓ

Արարկիրի Ծակ գիւղէն հայր և որդի խաչատուր և Պետրոս Ջուռնաճեան որոնք տասը տարիէ ի վեր կորսուած են. կը խնդրուի ամէն անոցմէ որոնք տեղեկութիւն ունին անոնց վրայ հաճին խմբագրութեանս տեղեկութիւն տալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պօէրները գրաւեր են քանի մը փոքրիկ տեղեր, սակայն Լատրամիթ և միւս պաշարուած նշանաւոր քաղաքները դեռ կը գրեմանան: Մինչև հիմա Պօէրները զգալի յաղթութիւն մը տարած չեն: Հաւանական է թէ կատաղի պատերազմ մը սկսի այն ժամանակ, երբ անգլիական զօրքերը բոլորը հաւաքուին և կարող ըլլան յարձակողական դիրք բռնել:

— Անգլիացի մը, որու արգելուած էր Բրէտտիայէն դուրս ելլալ, դուրս ելլալու իրաւունք ստանալով եկեր է Դիւրպան կը պատմէ թէ իր հոն գտնուած մամանակ անգլիական 52 սպայ և 1275 ենթասպայ ու զինուոր գերիկան եղեր. գերիներու պահպանները ամէնքն ալ գերմանալիներ են. ինչպէս և ամբողջութիւններու մէջ ուրախութիւնը:

— Լօտրայի մէջ պատերազմի ժամանակ սպանուածներու այրիներուն և որբերուն համար բացուած հանգանակութիւնը արդէն քանի մը օր առաջ հասեր է 5,350,000 ֆրանքի. սերիշ հանգանակութիւն մը որ բացուած է Թրանսիլանիա գաղթողներուն օգտին, հասած է 4,100,000 ֆր. քի Այս երկու հանգանակութիւններու համար նուէրներ կը տեսնուին:

— «Թամպուրի Բեթեթուպուրի թղթակիցը կը հաղորդէ թէ պէտք չէ թեթեւութեամբ վերաբերել գէպի այն լուրը որ կը վերաբերի Ռուսիոյ Ալուանիստանը տիրապետելուն:

Թղթակիցը կը կարծէ թէ Ռուսիոյ կառավարութիւնը կը պատրաստուի շարժիլ դէպի Հերատ, պատրաստ բռնելով Ալուանիստանի էմիրին յաջորդութեան խնդիրը, որ իբր թէ կրնայ խոռոչութիւններ ծագեցնել երկրին մէջ և Ռուսիոյ սահմանակից նահանգներու վրայ ազդել:

Այս ըսածները հաստատուելու համար թղթակիցը կը թուէ Ռուսիոյ այն պատրաստութիւնները որ այդ նպատակով եղած են:

— Աւստրիական թերթերը արդէն սկսած են խօսիլ Անգլո-թրանսիլանիական պատերազմի մասին:

Իսկ ռուսական «Նովոստի» թերթը կը թէ թամանակ է որ Եւրոպական տէրութիւնները բարեկամաբար միջամտեն այդ խնդրոյն, նոյնիսկ Լաճէի խաղաղութեան ժողովին որոշումներուն հիման վրայ:

Չը խնդաք:

— Անգլիական զահաժառանգի ծննդեան արեւդարձը Լատրամիթի մէջ տօնած են Պօէրներու վրայ 21 պայթուցիկ ռումբ արձակելով. և ժէներալ Ուրտ նախաժող կառավարիչէն

խնդրած է իր բարեմաղթութիւնները իշխանին հեռագրելու կեցցե քաղաքակրթութիւնը, իշխանի տարեգարձը մարդ սպանելով կողջունեն լուսաւորեալ մարդիկ:

— Ռուս կառավարութիւնը ծեւրակոյտի անդամներէն մէկուն պաշտօնէն հրաժարեցուցեր է անոր արասահմանեան թերթերուն մէջ յօդուածներ գրելուն համար:

Թ՛ՏՐՈՆ «ԱՆԻՆԷՆ ՍԼ՝ՎՅՊ»

«Վէսէլլո» հայ թատերական խումբը, այս գիշեր, Նոյեմ. 13, պիտի ներկայացնէ՝ «Սպանիա տէնիլ» հրաշքալարը՝ տրամագծէսի 4 արար: Քանթօ և պալէթ Պ. և Տկ. Տօրէի կողմանէ:

Վաղը կիրակի գիշեր, նոյ. 14, պիտի ներկայացնէ՝ «Կիճէ» զուլարը կամ Մաքարնայի յօբանթան տրամագծէսի 4 արար: Տօրէի կողմանէ:

Յ. ՃԱՆԿԻՒԼԷԱՆԻ
ՆՈՐ ԲԱՆՈՒՄ
ԻՆՍՏԻՏԱՍՏԱՆՈՅ
Թիւ 389 Իսկիշի-պաշի

Կը վաճառուի ծրարիստ. բոսթալի եւ աղբրագրի ամէն տեսակ քուրբ նաւ «Նարժում»:

Շարժուել կը ծախուի նաեւ նամակատան գրիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

Ս. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ 40 Շ 4 Ա. Ա. Ս.

Մուսաղա, սեղանաւոր Սարգիս Կազարիչեանի կարգը:

Ճաշակաւոր, տոկոսն եւ ձեւաւոր կօշիկ շինել սալ ուղղող պէտք է գիմ Պ. Սահփան Սորասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ:

ՊՕՐՍԱ

Վառնա 12 նոյեմբեր

Վազօն	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	53—57	9—9.70
ՄԻՍԻՐ	54—56	5—6.20
ԱՐՔԱ	—	—
ԵՌԻՒՅ	—	—
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55—60	9.50—11.20
ԱՐՔԱ	38—44	6.50—7.40
ԵՌԻՒՅ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—57	6—7
ՏԱՐԸ	55—58	5.50—60
ՖԱՍՈՒԼԵԱ	100 յիւ	12—20

Հէր կիւն կէլէն մալ

ՊՈՒՂՏԱՅ	25—30	առապա
ԱՐՔԱ	8—10	»
ԵՌԻՒՅ	1—2	»
ՖԱՍՈՒԼԵԱ	3—4	»
ՄԻՍԻՐ	3—4	»
ՏԱՐԸ	1—2	»

Առապա մուսաղա Նարթիս 21.20 ֆրանք հրապար էլէ տիր: